

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть, Редакция «Мелкы».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցիտով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Վարչական կենտրոնի առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆԻ Ի միջին այլոց. Գիւղացու ծանր քո-
պէները. Նամակ խմբագրութեան. Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԻ. Ռուսաստանը և
Անգլիան. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Գինեգործների համագործող Օրգանալում:

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մենք հաղորդել էինք մեր ընթերցող-
ներին, որ հարց է յարուցված վարչական
մի փոփոխութիւն կատարելու Զանգեզուրի
և Նախիջևանի գաւառների վերաբերու-
թեամբ, այն է Զանգեզուրի գաւառը մի
մասը, որ գտնվում է Մեղրի շրջակայ-
քում, հանել այդ գաւառի վարչական ի-
րաւասութիւնը և միացնել Նախիջևանի
գաւառի Օրգանալի մասին, կազմելով մի
նոր գաւառ:

Այդ հարցը դեռ դրական լուծում է
ստացել և մինչև այժմ ըննութեան և
մշակութեան շրջանում է գտնվում: Զան-
գեզուրի գաւառի այն գիւղերը, որոնք
ձգտում ունեն Օրգանալի վրա գրված
լինելու, անհամբերութեամբ սպասում են
վարչական այդ փոփոխութեան իրագործ-
մանը, որով նրանց տրված կը լինեն մեծ
գիւրութիւններ: Այդ գիւղերի բնակիչնե-
րը մի քանի ժամկէտ ընթացքում կարո-
ղանում են գալ Օրգանալ, մինչդեռ Գո-
րիս գնալու համար անհրաժեշտ է մի
քանի օր: Այդ գիւղերը մեծ մասամբ
օգտվում են Օրգանալի պատահանից,
դեղատանից, փառասանոցից և իրանց հա-
ղորդակցութիւնը Թիֆլիսի և զրաւ աշ-
խարհի հետ կատարում են Օրգանալի
վրայով: Մնում է, որ վարչական կենտ-
րոնն էլ ձանաչի Օրգանալը և այդպի-
սով վերջ գրվի այն գոտարութիւններին,
որ կրում է այդ գիւղերի ազգաբնակու-
թիւնը, ստիպված լինելով դնալ Գորիս,
որի հետ նա ոչ մի բնական և կենսական
կապ չունի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾՈՎԸ ՕՐԵՍՍՆՈՒՄ

II

Երկրորդ սեկցիայի նիստերը սարսափելի
աղմուկից էին կրճերը ուղղակի չէին թողնում
գործի անցնել: Մի քանի անգամ նիստերը
ընդհատվել են. առանձին գրեթէ չէին գա-
լիս մասնաւոր շահեր, բնասարքիների շահեր...
Բնասարքիայում գինու մէջ մեծ քանակու-
թեամբ չաքար են խառնում: Մասկովայի կոմի-
տէն գինին չաքարով չեն խառնում, քանի որ
մարում.—«Դա ֆալսիֆիկացիա է», գոռում են
մասկովայիները և այստեղ:

Հակառակորդները պնդում են, որ ընդհա-
կառակը ֆալսիֆիկացիայի կենտրոնը Մասկովայն
է.—այստեղ գինին են չինում առանց... խաղողի
հիւթի:

—Ենչու այդ առիթով Մասկովայի կոմիտէն
լուի էր, լսվում են բողբոջներ: Հետաքրքա-
կան էին ժողովում մի գիւղացի գինեգործի
ներկայացուցչի և երկու հասարակ զիւղացի-
ների ճանդերը:

Առաջին թերթով և ճարտարութեամբ խօսում
է այն կորստեան մասին, որին անխուսափելի
կերպով կենթարկվին բնասարքի 160,000
գիւղացիներ, եթէ չաքարի դէմ մղվելիք արշա-
ւանքը աշողութեամբ պսակվի: Զէ կարելի
էրաւ, մոռանալ, ասում է պ. ճառարտը, որ
գիւղական տնտեսութիւնը զգալի կերպով տա-
րբերում է կալուածատիրականից: Հարուստ
ժողովականները ուշադրութիւն է հրաւիրում
կալուածատէրերը կարող են զարգացնել նոր
տնտեսի որթեր և պտղի սպասել մի քանի
գիւրը անազնի նշանակութիւն ունի հասարա-

Մեղրի և նրա շուրջ գտնվող կամ ու-
րիշ խօսքով Արեւիքի քանչորս գիւղի հա-
սարակութիւնները ընտրել են իրանց մի-
ջից ներկայացուցիչներ և ուղարկել Թիֆ-
լիս յայտնելու, որ վարչութեան առաջ
դրված հարցը բոլորովին համապատաս-
խան է տեղական պահանջներին, որ են-
թադրեալ փոփոխութիւնը իսկապէս մեծ
օգուտներ կը բերէ Արեւիքի ժողովրդին
և որ հարցի շուտափոխ լուծումը օր
առաջ ընծայած կը լինի գիւրութիւններ
ազգաբնակութեան համար:

Մանաւանդ այն օրից, երբ շինվեց
Թիֆլիս—Երևանեան երկաթուղին և դրա-
կանապէս փոփոխեց այդ երկաթուղու շա-
րունակութիւնը մինչև Զուղայ, աւելի ևս
մեծ ոյժով երևան եկաւ Արեւիքի ազգա-
բնակութեան հակումը դէպի Օրգանալ, ի
բրեւ վարչական կենտրոն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ի Մ Ի Զ Ի Ա Յ Լ Ո Ց

Անցեալ անգամ մենք խօսեցինք պրօֆէսոր
Մարտինի այն յօդուածի մասին, որ տպւած
է «Вестник Европы» ամսագրում և վերա-
բերվում Ամերիկայի Միացեալ-Նահանգներին:
Ինքեք մի քանի ամսաթուղթներին:

Պ. Մարտինի «տպագրութիւններ» ամե-
նահետաքրքրական տեղեկութիւնները Միա-
ցեալ-Նահանգների ժողովրդական կրթական
օրգաններին են վերաբերում: Մասային կըր-
թութիւնը, որ մեծ հանրապետութեան կեան-
քի ամենակարեւոր տեղեկին է կազմում, իր
գոյութեամբ պարտաւոր է լուսաւորութեան
այն խոշոր հաստատութիւններին, որոնց հա-
մար ամերիկացին չէ խնայում ոչ մի միջոց:

Երկրականի կողմից կատարելապէս ապա-
հոված լինելով, Ամերիկայի ուսումնարանները
լուսաւորութեան ճառագայթները ուղղում են
դէպի այն կողմերը, որ տպագրութեան հաւա-
նականութիւնը աւելի չօշակելի է: Ներկա-
յում Միացեալ-Նահանգներն ունեն 629 բարձ-
րագոյն ուսումնարաններ, որոնց սեփականու-

տարի, իսկ գիւղացու համար այդին չէ որ գո-
յութեան միակ աղբւրն է:

Շուրջ առաջարկում էք հրաժարվել չաքա-
րից, առաց գիւղացիներից մէկը.—չաքար ճարի,
ես կը հրաժարվեմ... Բայց չէ որ այն ժամա-
նակ իմ այդին ալ ևս ոչ մի արգելք չի բերի
ինձ... Ինչ անել, իմ թերթը տալիս են այն
աստիճան թթու գինի, որ առանց չաքարով-
նելու նրան չէ կարելի խմել... Այսպիսով ինձ
մնում է արմատաւան անել իմ խաղողի այգին
և զրաղել ֆրանսիական որթերի պատուաւո-
մամբ... Բայց չէ որ վաղը ես ուսելու հաց
չեմ ունենալու, ո՞վ պէտք է կերակրէ ինձ և
իմ ընտանիքը երկար տարիների ընթացքում,
մինչև որ իմ նոր այգին ինձ պտուղ կը տայ...
Մենք տուգեր չենք, մենք իրիմի մեծամեծները
չենք, որոնք այդպէս կատարաբար յարձակ-
վում են չաքարի վրայ...:

Այդ խօսքերը իսկական տրտուճ էին ար-
տայայտում հոգու խորքերից և այդ աղաղակին
անկասկած կը միանան Բնասարքիայի 160,000
գիւղացի այգետէրեր, որովհետեւ նրանց համար
չաքարի հարցը օրական հացի խնդիր է:

Եւ բայց մեծ թողնում սեկցիայի բոլոր նիս-
տերի նկարագրութիւնը, որոնք չաքարի արգել-
կան էին, կանդ առնելով միայն վերջինի վրա,
երբ հաւաքվել էին վերջնականապէս վճռելու
այն հարցը թէ, թողարտելի է արգելք գինին
չաքարով չինելը:

Նախագահ պ. Թայրօյ, որին չաքարական-
ների պարագլուխ պէտք է համարել և որի 12
տարեկա շահերը յօգուտ գինեգործութեան
արդէն գնահատված են վերջիններիս կողմից՝
10,000 բաժանորդ ունեցող մի մասնագիտու-
ման թերթի խմբագիր հարց է տուել իր բա-
ժանորդներին չաքար խառնելու մասին: Երեք
դէպարտամենտներ միայն թողարտում են, իսկ

Թիւնը 680 միլիոն ռուբլու է հասնում 1893—
1901 թւին համալսարանների, գրադարանների
և լաբորատորիաների օգտին մասնաւոր նուէր-
ներ եղել են 422 միլիոն ռուբլու, իսկ 1898—
1899 ուսումնարանական տարեշրջանի ընթաց-
քում յատկապէս համալսարանների օգտին
մասնաւոր մարդիկ նուիրել են 45 միլ. ռուբլու:
Բացատրութիւններ, ի հարկէ, աւելորդ են:

Ամերիկայի կրթական սիստէմի իղէալական
նպատակներից մէկն էլ այն է, որպէս զի սա-
ների մէջ մտաւոր զարգացման հետ զուգըն-
թադար զարգանայ և զգացմունքը: Երկաթա-
տող իրերով հետաքրքրվել ոչ թէ սիստեմա-
տիկաբար պաշտպանվում և զարգացնում է
մանուկ սերնդի մէջ, այլ նոյն իսկ խրախուս-
վում է: Եւ այն է գլխաւոր պատճառը, որ
տարրական ուսումնարաններից միջնակարգ ու-
սումնարաններ անցնելու բացառութիւն չէ, այլ
ընդհանուր օրէնք մինչև անգամ ամենաաղքատ
աշակերտների համար:

Ամերիկացիները, ասում է Մարտինի, ար-
գարացի կերպով պարծենում են այն փաստով,
որ գիտութեան բովանդակ չըջաններ և ա-
ռանց բացառութեան բոլոր ուսումնարանները
մատենի են ժողովրդի ընդհանուր դասակարգի
որդոյ, ամենաաղքատ պատանիների անգամ,
հնորէի լայն արտօնութեան, միշտ միջոց ու-
նեն բարձրագոյն ուսումնարաններ մտնելու:

Միջնակարգ ուսումնարաններում աւանդվող
առարկաների վերաբերմամբ պ. Մարտինի ու-
շադրութիւն է դարձնում այն վերին աստիճա-
նի կարևոր հանգամանքի վրա, որ Ամերիկա-
յում ապագային մրցում չը կալ կրթականկա-
նութեան և բնականութեան մէջ: Միջնա-
կարգ ուսումնարանները սովորաբար երեք
բաժանմունքից են բաղկացած. գրականական,
կրթական և բնագիտական: Իւրաքանչիւր աս-
տիճանը ընտրում է այն բաժանմունքը, որը
նրա հակումներին և ընդունակութիւններին
աւելի է համապատասխանում: Լատինական
լեզուն սովորելը թէ՛ և պարտաւորական է, բայց
չառ համեստ չափով, այնպէս որ աւելի լուրջ
առաւելութիւն տալով նոր լեզուների աւան-
դութեան, վերջիններս արեւմտեան Ամերիկա-
յում աստիճանաբար դուրս են հանել հին լե-
զուները կատարելապէս:

Կական առողջապահութեան տեսակէտից, բայց
գինին չաքարով չեն բացառիկ նշանակութիւն
ունի գինեգործութեան համար: Ուստի համա-
ժողովը թող յայտնէ իր կարծիքները այդ մա-
սին և խնդրամտոյց լինի, ցոյց տալով էական
միջոցներ, որոնք կարող էին բարելաւել գինե-
գործութիւնը, որպէս գիւղատնտեսութեան մի
ծիւղ:

Դարձեալ սկսվում է իրարանցումը: Նախա-
գահը անդամներին կրկին կարգի է հրաւիրում,
որ ոչ մի հետեւանք չէ ունենում:
Նախագահը ժողովարկում է վճռել հետեւեալ
երեք հարցերը.

1) Թողարտելի է արգելք խառնել գինու
քաղցուի հետ եղէգի կամ ճակնդեղի չաքար
որոշ ասանակով քանակութեամբ գինու գոր-
ծողութեան տեղերում: Քաղցուի ետեւ խմոր-
ման ժամանակ, թէ՛ նախ քան այդ:

2) Թողարտելի է արգելք գինու հիւթի
եղելը և նրա խառնելը քաղցուի հետ՝ նախ քան
խմորումը կամ խմորման ժամանակ:

3) Թողարտելի է արգելք խառնել գինու
հետ չաքար սպիրտ որոշ ասանակով քանակու-
թեամբ, նայած սպասվող գինու տեսակին:

Հակառակորդականների պարագլուխ իշխան
Գոլիցին ասում է. «Եւ չեմ հասկանում հարցի
այդ ձևով դնելը: Ինչպէս դուք կարող եք
ստուգել չաքարի որոշ սանահամար չա-
նակութիւնը: Գոնէ անբերրի վատ տարինե-
րում խառնեցէք չաքար, բայց այն ժամանակ
այդ գինին անուամենցէք պնդաբար»:

Մի այգեւէտ յայտնում է, որ ճիւղանալու
10,000 բաժանորդ ունեցող մի մասնագիտու-
ման թերթի խմբագիր հարց է տուել իր բա-
ժանորդներին չաքար խառնելու մասին: Երեք
դէպարտամենտներ միայն թողարտում են, իսկ

Ուշադրութեան առնելով Ամերիկայի գիտու-
թեան տաճարներում տիրապետող օրինակելի
ազատութիւնը, ընթերցողին, բնականաբար,
պիտի հետաքրքրէ այն մանկավարժական կազ-
մը, որ ուսուցչ յայտնի, աշխարհահռչակ ա-
նուն կրող գիտնականի համակրանքն է վայել-
լում: Պ. Մարտինի հետեւալ կերպով է նկա-
րագրում աշակերտների և ուսուցիչների յա-
բերութիւնները.

«Ամերիկայում ծնողների և ուսումնարաննե-
րի, ուսուցիչների և աշակերտների մէջ թնա-
մական զգացմունքի նշույլ անգամ չը նկատեցի
ես. ընդհակառակը ծնողները սիրում և գովում
են իրանց ուսումնարանները: Այն, ինչ որ տե-
ղի է ունենում ուսումնարանում կամ ուսումնա-
րանին է վերաբերվում, հետաքրքրում է նը-
րանց, և ամբողջ հասարակութիւնը ուսումնա-
րանի ընթացիկ շահերով, նրա ճակատագրով և
առաջդիմութեամբ է զբաղված: Ուսումնարա-
նական հանգէսները, տօները, խաղերը, թատ-
րօնական և գրականական երեկոյթները մի ա-
ռանձին սիրով և հրճուանքով են նկարագրվում
տեղական լրագրիչներում: Ուսումնարանի տօնը
—հասարակական տօն է»:

Հասարակութեան և ուսումնարանի մէջ պահ-
պանվող կապի և համերաշխութեան ամպիւր-
կան պատճառները յարգելի գիտնականը նրա-
նով է բացատրում, որ ամերիկական ուսումնա-
րանները բացառիկ սկզբունքի վրա են հիմն-
ված:

Ընտանիքի և ուսումնարանի մէջ միութեան
և սերտ կապի գաղափարը պահպանելու համար
Ամերիկայի քաղաքներում մայրերի կլուբնե-
ր կան: Այդ կլուբներում երեկոյեան ուսուցիչ-
ների և մայրերի ժողովներ են կազմակերպ-
վում, որտեղ փոխանակութեամբ միջոցներ են որոն-
վում, որպէս զի ընտանիքի և ուսումնարանի
միութեան պայմանների ապահովութիւնը աւելի
լայն ծաւալ ստանայ յօգուտ ուսանող սերնդի:

Մի և նոյն ուրախալի պատկերներն ունեն և
բարձրագոյն ուսումնարանները:

«Ուսանողական կեանքը իղէալական կազմա-
կերպութիւն ունի. ընդհանուր ուսանողական
կեանքի օրգաններն են. 1) ուսանողական պար-
բերական հրատարակութիւններ. 2) համայնա-
կան կողմակերպութիւն, և 3) համալսարանա-

միւնները հակառակ են»:

Իշխան Գոլիցին յայտնեց, որ Բէլգիայում
սկզբում գործ էին ածում բուրգոնեան գինի,
բայց երբ վերջինում սկսեցին չաքար խառնել,
այն ժամանակ նրանք դադարեցին այդ գինին
գործ ածելուց:

Մէկը մի ընդարձակ ճառ է արտասանում
յօգուտ չաքարով չինելու, որ ընդունվում է
բուն ծափահարութիւններով:

Մի բնասարքի, ընդհակառակը, հաւատաց-
նում էր, որ Բնասարքիայի գինին այնքան լաւ է,
որ աւելորդ է խառնել չաքար, բայց այդ ճառը
ընդհատվում է բուն բողբոջներով, նոյն իսկ
սուրբոյով...:

Մի ուրիշը ասում է, թէ չաքարը պահան-
ջում են, ի նկատի ունենալով գիւղացիների
չափերը, բայց Բնասարքիայի գինին ընկել է
հէնց այն ժամանակից, երբ սկսել են նրա մէջ
չաքար աւելացնել: Այդ ճառը ևս ենթարկվում
է նախկինի վիճակին...:

Մի այլ բնասարքի յայտնեց, որ իր առանց
չաքարի գինին Իգմայիլի գաւառում ծախվում է
վերջին չորս ռուբլով և կարծում եմ...:

Ձայն եր.—Միայն է...:

Ուրիշները.—Մուտ է, այստեղ վերջին
30 կոպեկն էլ բաւական է...:

Ձայն եր.—Մենք չենք ուզում լսել... լսե-
ցէք... հետագէք ամբիջները...:

Մի ուրիշը նոյնպէս պնդում է չաքարի ա-
ւելորդութեան մասին, բայց նախագահը զըր-
կում է նրան ձայնից և նա հետանում է ամ-
բիջից սուրբոյների ուղեկցութեամբ...:

կան հանդէսներու-տօներու Լրագիրներէ ե հանդէսներէ հրատարակութիւնը լայն ծաւալ ունի։ Հարկարդի համայնարանում ուսանողները հինգ լրագիրներ ե հանդէսներ են հրատարակում։ Ամերիկական ժողովրդի մի այլ վեհ յատկութիւնը խոր ապաւորութիւնն է թողել պ. Մարտինսի վրա—այն է, անսահման յարգանք դէպի իւրաքանչիւր ազնիւ արդիւնաբեր աշխատանք։

«Ոչ մի ամերիկացի չէ ամաչել այն հանգամանքից, որ, օրինակ, ուսանողները, դասախօսութիւններէ վճարը աշխատելու նպատակով, ամառային արձակուրդի ժամանակ երկաթուղում, ճաշարաններում ե բիրտաներում կօնդուկաօրի, կառապաններին, նոյն իսկ հասարակ մշակութիւնը պաշտօն են վարում։ Յաճախ այս կամ այն բարձրագոյն ուսումնարաններին սաները վեր են կենում կանուխ, առաւօտեան ժամի 2-ին կամ 3-ին, որպէս զի վազեն խմբագրութիւնները ե ապա ոտքով կամ վերօրիպեղներով լրագիրներ բաժանեն։ Ձանել, աղքատ օրերդները աղանիս պաշտօն են ստանձնում, պայման դնելով, որ տանտիկներ ամեն օր երկու կամ երեք ժամ արձակէ նրանց համարաբաններում դասախօսութիւններ լսելու։»

Այս այն կենսական սկզբունքները, որոնք Հիւսիսային Ամերիկայի հատարակական-պետական հիմունքներն են կազմում ե որոնց բազմակողմանի զարգացողութիւնը խոստանում է մեծ հանրապետութեան պատմական-կուլտուրական աներևակայելի ապագայ։

Երբեմն ծայրահեղ կօնտրաստների դիմելը անհրաժեշտութիւն է, մասնաւոր մեր կեանքում, երբ ամերիկական քաղաք Մօրիէնոյի գրկում երազելու ժամանակ յանկարծ մեզ արթնացնում է մայրենի իրականութեան փայտոյի խայթը։

Բաթումի «Քալաթօսնոսերից» մէկին մի ինտելիգենտ օրերը դիմելով պաշտօն է խնդրում։ Օրիորդին հետեւալ պայմաններն են առաջարկում։

Ձր քնել, երբ հանգամանքները այդ կը պահանջեն։

Ձր վերաւորվել, երբ յոգնակի եղանակով չեն դիմի նրան հիւրերի ներկայութեամբ, փաղաքանքից չուրախանալ, վերաւորանքից չը նեղանալ։

Լուսաբը անել, երբ լուսաբարբը զբաղված կը լինի էրօտով։

Ուսումնասիրել լոտօ խաղի հոգեբանութիւնը։ Ռոճիկ—15 րուբլի ամսական, առանց ճաշի ե հագուստի։

Տիրոսեան

ԳԻՒՂԱՑՈՒ ԵՄԵՐ ԲՕՊԵՆԵՐԸ (Նամակ Ներանքից)

Գիւղացու առօրեայ հոգեբերի մէջ յաճախ պատահում են բազէներ, որոնք նոյնպիսի ծանր ե հոգեմաշ են, որքան նրա մանուկների մերկութիւնը, նոյնքան սոսկալի, որքան քաղցը, որքան սովը իր հեռանալներով։

Նրանց կանաչը կանաչը սէր ունեն դէպի գործը, բայց գիտութիւն չունեն... ստացվում է թթու գինի... ուստի հարկաւոր է չաքար... Նիթէ դուք արգելէք չաքարը, մեր ատամները խնդրամատուց կը լինի կառավարութեան առաջ թող տալ չաքար խառնել... այո, այսպէս է...

Այդ ճառերին վերջ չը կար, աղմուկը անսակարարերի է։ Նախագահը վերջապէս առաջարկում է հարցը քուէարկել վերոյիշեալ խմբագրութեամբ։

Ուղէնի գինու ներկայացուցիչ Մարտինսի խնդրում է պարզել—ինչ անուն պէտք է կրէ այդօրինակ գինին։

Ձայն եր.—Պարզ է, պարզ է. քուէարկել... Ուրիշն եր.—Ձէ կարելի քուէարկել այդ խմբագրութեամբ։

Սկսվում է իրարանցում, որ հետզհետէ օտարականում է։

Մշակվում է հարցի նոր խմբագրութիւնը։ «Թոյլատրելի է չաքար խառնելը գինու քաղցուի հետ, անուանելով նրան վաճառքի ժամանակ «խաղողի գինի»։ Հարցի այդ խմբագրութեան դէմ դարձեալ բողոքում են կամերգէր Մարտինսի, իշխան Գօլթինսի և... խրիմեթը։

—«Ես կարող եմ համաձայնվել, ասում է պ. Մարտինսի.—որ կարելի է թոյլատրել չաքարովցնել, բայց չեմ կարող այդպիսի գինին անուանել «խաղողի»։

Ձայն եր.—Հարցը զբաղւած է շատ որոշ պարզ է. բաւական է, քուէարկել...

Աղմուկ, իրարանցում... Վերջապէս գիւղացի ժամը 11/2-ին նախագահը հարցը դնում է այսպէս. «Թոյլատրելի

Մամանում է գիւղացու թկան եղը, նոյն արտառութիւնը աչքերով գիւղացին դուրս է տանում իր գոմից աշխատաւոր կենդանու դիակը, ինչ աչքերով նա կը հետեւի վաղա՛մեռ որդու դիակին։ Քաջութ, տանում է անխիղճ վաշխառուն գիւղացու գոմէկը նրա պարտքի տեղ, զլխակոր գիւղացին տխուր ու տրտում ճանապարհ է գցում իր հաւատարիմ ընկեր գոմէկու կին ճիւղ ախպէս, ինչպէս ճանապարհ կը գցէր իր չափահաս որդուն դէպի մի հեռավոր պանդոկութիւն։ Սոսկալի ձմեռայն պատճառով խոտի ու դարբի թանգութեան շնորհիւ գիւղացու գոմից լսվում է սոված մնացած մի հատիկ կովի աղերսող ջառագիւղ.—գիւղացու սիրտը այնպէս մորմոքում ու կսկծում է, ինչպէս կը մորմոքէր նրա սիրտը իր հարազատ գաւառիկների սովից առաջ եկած տանջանքները տեսնելով։

Այս այն վերջին տեսակի ծանր դրութիւնը զգալի է օրէց օր շնորհիւ այն տեղը ե յամառութեամբ շարունակվող ձմեռով, որը բոլորում ենք մենք այս տարի։

Ձր տեսնում է ձմեռը շարունակվում է այնպէս հաստատուն ու միօրինակ, որ կարծէք դեռ նոր է սկսվում։ Միապաղաղ հաստ սպիտակ շերտի վրա, փետրվարի վերջին, դարձում գոյանում է մի այնպիսի նոր շերտ, որ կարծէք այլ ու դարձն չէ լինելու։ Մի խօսքով սար ու ձոր, արտ ու արօտ այնպէս քաւրացել, այնպէս ծանկել են, որ դեռ մի երկու շաբաթ գիւղացու ոչխարն ու տաւարը կապված պիտի մնան, դարբով պիտի ապրեն, հընարաւորութիւն չունենալով դաշտ դուրս գալու, իրանց համար կերակուր դանելու։

Ով եղել է գիւղում, նա միայն կարող է իմանալ, թէ որպիսի կապով կապված է իր լծկանի, իր գաւառիկների կաթնատու կովի հետ գիւղացին։ Եւ այս միասնական հասկանալի է։ Առանց եղան ու կովի գեղջկական ընտանիք գոյութիւն ունենալ չէ կարող, առանց վար ու ցանքի, առանց թացանի օջախ չէ հաշուում իրան գիւղացին՝ յատկապէս լեռնոտ մասերում, ուրեմն չը պէտք է դարմանալ, որ յաճախ գիւղացին իր մի զոյգ եղան ու կամ մի հաստ կիթի կովի հետ ապրում է նոյն աղքատիկ ծածկի տակ։ Այդ քիչ բան չէ նրա համար։ Իր մէջը լծկանի մէջքին տուած քուն մտնող գիւղացին մոռանում է իր չաքաշ կեանքը, իր հոգան ու տանջանքը, երբ իր գաւառիկների համար մի կտոր հաց ունի տանը ե իր եղան համար մի փոքր դարբ մարագում։ Իսկ երբ նրա խոտը վերջացել, մարագը դատարկվել է, իսկ դուռն ու երդիկը ձիւնը եկել փակել է, էլ մի խօսացրու սեւ սիրտն առած, միշտը կոխած խեղճ գիւղացուն։

Այսպիսի դրութեան մէջ է ահա այսօր գիւղացին, գոնէ այն գիւղացին, որին վիճակված է ապրել լեռնոտ մասերում, բնութեան անհիւրընկալ ծոցում, ուր ձմեռը սևում է յաճախ 6 ամիս, ուր ընտելիւնը մի պատուհաս

է արեօք գինու քաղցուի չաքարովցնելը ե նրան «խաղողի» գինի անուանելը ե յայտարարում է, որ ոչ մի առարկութիւն թոյլ չի տալ։

—Կը նշանակէ, մենք գրկվում ենք խօսելու իրաւունքից հարցի այդ ձևով դնելու դէմ, նկատում են կամերգէր Մարտինսի, իշխան Գօլթինսի ե մեծ աղմուկով ու իրարանցմամբ թողնում արագ։ Նրանց հետեւում են շատ անհաւաններ, ի հարկէ, դէպի... հեռագրատուն։

Հնդկամովում է ժողովը։ Քիչ յետոյ պ. Թալիւրով պաշտարկում է վերսկսել պարագայում։

—Ոչ, այդ անկարելի է. շատերը բացակայում են, դուք կամենում էք օգտվել հակաշաքարականների բացակայութիւնից...

Նախագահ.—Մենք իղուր ժամանակ ենք կորցնում։

Խրիմեթը կամենում են ընդհատել ժողովը, միւսները պնդում են շարունակել ե քուէարկել։

—«Դա յայտառակութիւն է, լսվում են ձայներ,—մենք եկել ենք այստեղ համաժողովով...»

Մէկը.—Պարոններ, ես եկել եմ 1000 վերամով հեռու մի անկիւնից համաժողովի, իսկ այստեղ թատրոնական ներկայացումներ են տրվում...

Ձայն եր.—Այստեղ վերաւորում են յարգելի աշխատաւորների, որոնք շատ օգուտներ են տուել գինեգործութեան...

Ուրիշն եր.—Երբ օր է մենք ժողովում ենք, բայց դեռ ոչինչ չենք չինել։ Այս ինչի նման է, ամօթ է...

Ձայն եր.—«Պէտք չէ այսօր ժողով... չը

է նրա համար, մասնաւոր այսպիսի տարիներում։

Ինչ անէ գիւղացին, ինչ անէ ապառաժոտ լեռնցին, կեանքից քաշված, ամենքից մոռացված լեռնցին, նա իր աղքատ ու ժլատ տնտեսութեամբ գիւղատնտեսին չէ գրաւում, միերդները սակաւութեամբ մասնագէտ տնայնագործներին չէ հրապարակում, իսկ անողոր ընտելիւնը կազմութիւն չէ հարցնում։ Ուրեմն ինչ պիտի լինի նրա դրութիւնը։

Այսպիսի ծանր պայմաններ մէջ ապրում է մի անագին ժողովուրդ, այդպիսի ծանր բազէներ վիճակված է մեզ պէս չնչող, մեզ պէս զգացող մի անագին ժողովրդի, միթէ մենք ակնատեսն պիտի լինենք միմիայն նրա՛յ այդ բաղդի հալածվածի տանջանքին ե լռեմք։

Ժամանակ է, որ հոգ տարվի այդ մոռացված ժողովրդի վրա, ժամանակ է, որ նրան սովորեցնելով մի այլ պարագայում, ես, փոփոխութիւն մտցնելով նրա անտեսութեան մէջ՝ տանք հնարաւորութիւն այսպիսի դժգոհ կերպով շարունակվող ձմեռն ընթացքում, որ խոտի ու դարբի օպառնան դէպքում այդ ժողովուրդը չը տանջվի, չը հալվի սովի մատնված իր լծկանի հետ, իր կովի հետ միասին. ժամանակ է վերջապէս հոգ տանել գիւղացու ծանր բազէները թեթեւացնելու համար։

Ա.—Դօ

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 4-ին

Ծածկալ «Մշակի» ներքին լուրերի բաժնում կարդում ենք Հաւաքարում տրվող հայերէն ներկայացումների մասին լուրեր, որոնց բովանդակութիւնը նոյն իսկ մեզ մասնակցողներին անհաճոյ է։ Օրինակի համար գրում են, թէ թատերասերների խումբը տուեց իր այլաբանորդը «Ես նրա մասնակցի» ներկայացումն... Ինչ հանրաժան է լի է, եթէ մենք հասարակ խեղճ բանաւորից, որը վեց օր աշխատելով արհեստ քրտինք է թափում ե քանի տեղ մատները կարում... մենք նրանից անում ենք 90, 70 կօպէկ ե ներս թողնում մի ցուրտ դարբաւ...

Այն ժամանակ միայն մենք մեր նպատակին ծառայած կը լինենք, երբ հայ երիտասարդ ինտելիգենցիան, մասնաւոր հաւաքարցիները օգնող կը հանդիսանան մեզ, երբ դերասանների շարքը մտնող ամեն մի նոր կատող թատերասէրը մեզանից վարձ չի պահանջի ե ձրի կը նպաստէ գործին, երբ նա կառքերի ե այլ բաների համար պահանջներ չի անի... երբ հայ օրիորդը մասնակցելու համար հինգ րուբլիներ չի առնի ե մեզ հնարաւորութիւն կը տան ծախսերը քիչ եղած ժամանակ իջեցնել գները ե ամեն մի բանաւորի ու մշակի համար մատչելի դարձնել տեղերը։

Առաջարկում ենք սիրողներին օգնել,—ներանցից ամեն մէկը մի ներկայացում է պահանջում, իւրաքանչիւրը մի տեսակ ծախս է աւելացնում ե մեզ յուսահատութեան մէջ գցում։

Այնուհետեւ լուր են տալիս, թէ ներկայացումը անցած ամիս, ծախսահարկութիւն, զորոգից ե այլու Դրանից ինչ դուրս եկաւ, քանի որ

կայ իշխան Գօլթինսի.—Այդ անամօթութիւն է, վրդովվում է մէկը...

Նախ.—Ես ձեզ արգելում եմ շարունակել ե... Մէկը.—Նեւրե-ե-ց-է-ք...

Դարձեալ քառու... այս ու այն կողմ աղաղակ է, որ լսվում է—չաքար... կեղծք... խաղաղութիւն... կեղծողներ ե ինչպատուութիւն... նոյն իսկ անվայել խօսքեր...

Քայլ քօլ.—Պարոններ, յանուն մեր գործի, յանուն ընդհանուր շահերի...

Բայց նրան խօսելու հնարաւորութիւն չեն տալիս...

Ամբիւս է բարձրանում շաքարական պրօֆ. Ալմէդիդէն։

—«Այստեղ խօսում էին վերաւորանքների մասին. ես գիտեմ, որ դա իմ հասցէին է ուղղված, չեմ վերաւորել. ես միայն ասել եմ, թէ գինու ակցիզը կարող են թողնալ միայն մեր լծկանները (այսինքն խրիմեթը)։ Ես, պարոններ, նոյնպէս շատ եմ աշխատել այդ հարցի վրա. յիշեցէք իմ ջանքերը գինեգործութեան վերաբերում...»

—«Բաւական է, լռեցէք... այդ վայելուչ չէ... Աղմուկ ե կրքեր հասնում են ծայրայեղ չափերի։

Գուէարկվում է հարցը, ե րեսարաքից յաղթութիւնը տանում են անարկու մեծամասնութեամբ (173—9)։ Եթէ հակաշաքարականները նոյն իսկ մասնակցէին քուէարկութեան, այն դէպքում էլ յաղթութիւնը կը մնար չաքարականների կողմը 9/4 մեծամասնութեամբ։ Սակայն շատ տարօրինակ է հակաաւորողների վարմունքը. նրանք երբեք իրանց հարց չէին տալիս, երբ պէտք է վերջապէս վերջ տալ այս ամենին։ Զէ որ նախագահը օտարված եղաւ

սիրողների ե սիրողներին պակասութիւն ունենալով չենք կարողանում ընտրել այնտեսակ պիտանք, որոնք նիւթ տալիս հաւաքարցի հանդիսականներին ե ճարահատեալ վերցնում ենք փոքրաթիւ գործող անձինքներով պիտանք՝ օրինակի համար, «Գաղտնի օյժ», «Կեանքի խնձոր», «Սառիլ», «Ոճրագործի ընտանիքը» ե արանց նման ուրիշ պիտանք, որոնց ներկայացնելը դեռ վաղ է հաւաքարցիների համար։

Ուստի ե մենք մեզ մեղաւոր ճանաչելով ամեն բանում, մեր ականջն է ծակում ամեն մի գովաւանական խօսք լրագրական էջերում. այդ լուր տուողները երեւի մօտիկ ծանօթ չեն մեր դրութեան հետ. մենք դեռ ես ոչինչ չենք չինում, կարող ենք օգնութեան ե այդ օգնութիւնը խնդրում ենք ժողովուրդի սիրողներից։

Ի դիմաց թատերասերների՝

Գ. Փիլոսոֆան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ձիւնանների միմիայն հաստատեց ինչէլի-Թէրանան երկաթուղու ակցիզներական ընկերութեան ընդհանուր արտակարգ ժողովի որոշումը՝ ընկերութեան վարչութեան տեղը Մօսկվայից Պետերբուրգ փոխադրելու մասին։

Լուսմ ենք, որ պ. Պօղոս Կարա-Մուրզան կրկին հաւաքում է իր խումբը՝ ամսիս վերջին իր հանգուցեալ եղբայր Գ. Կարա-Մուրզայի մահվան տարեդարձի առիթով մի համերգ տալու նպատակով։

Բագուից, տիկին Ե. Սարգսեանից ստացանք յիսուն րուբլի, որից 40 ր. Ն. Շահլամեանի բժշկութեան, իսկ 10 ր. հանգուցեալ ուսուցիչ Տէր-Դաւիթեանի չքաւոր ընտանիքի օգտին։

Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը տեղի կունենայ մարտի 23-ին։ Ժողովի զբաղման նիւթերն են,—1) ընթերցումն 1902 թուականին կայացած ընդհանուր ժողովի արձանագրութեան, 2) քննիչ մասնաժողովի զեկուցումն ե հաշիւ վարչութեան գործունէութեան մասին 1902 թուականի ընթացքում, 3) հաշիւ ընկերութեան գումարների մասին, 4) 1903 թուականի նախահաշիւ հաստատութիւն, 5) ընտրութիւն վարչութեան ե քննիչ մասնաժողովի անդամների։

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը պատրաստել է մի զեկուցում, որով առաջարկում է միջնորդութիւն յարուցանել կառավարութեան առաջ՝ ազատելու Թիֆլիս քաղաքը այն ծախքերից, որ նա տալիս է ամեն տարի տեղական ոստիկանութեան պահպանութեան համար։

Երեւոյթի, մարտի 4-ին, Թիֆլիսի օպերային խումբը ներկայացրեց Նապրաւնիկի

հարցը մի քանի անգամ փոխել—հակառակորդների պահանջմամբ Մեղադրել նրան անարդարութեան ե անազնութեան մէջ աւելի քան պահաւարելի է. բայց կրքերը կուրացնում են մարդկանց ե թոյլ չեն տալիս յիշելու, որ այսպիսի դէպքերում առհասարակ քուէարկութեան օգտվելը հարցերի խմբագրութիւնը վերապահվում է նախագահին։ Աւելորդ էին այդ աղաղակները, գոռոցները ե այդ մեծամասնութեամբ հետանալը, որ անբարեխղճութեան նշան է։ Մարդ գարմանում է, երբ գիւղացիին է ամբիւս բարձրանում ե խօսում այդ ամենի մասին։

—«Ես, պարոններ, ասում է նա,—հասարակ մարդ եմ, ոչ ինտելիգենտ. սովորել եմ ժողովրդական զարգացում. շատ քիչ բան եմ հասկանում. երբեք ես բաղդ չեմ ունեցել ներկայ լինելու «Վայելուչ» մարդկանց այսպիսի փառաւոր հասարակութեան մէջ, Եղել եմ ես գիւղական ժողովներում ե միշտ փափաղում էի ընկնել մի «ինտելիգենտ» ժողով. բայց... անաքանդներ, էս ինչ է, մեր գիւղացիք կը կարմրէին...»

Փուէարկվում են հետեւեւ ընդունվում է երկարատեւ ծափահարութիւններով Պրօֆէսոր Ալմէդիդէն առաջարկում է երախտագրութիւն յայտնել պ. Թալիւրովին, որ մեծ ջանք գործ դրեց այդ հարցը դրականապէս վճեկութեամբ Թողովը օգնութեամբ ընդունում է առաջարկութիւնը։

15-ին բոլոր սեկցիաները վերջացրել էին իրանց պարագայումները ե ներկայացրել ընդհանուր ժողովին զեկուցումներ ի հաստատութիւն։

(Կը շարունակվի)

կոյնան Նաղիկովի անուն քաղաքային զբոս-
րոցում ընթերցանութիւն կար, որ նուիրված
էր բանաստեղծի յիշատակին. աշակերտներին
բաժանվեցին բոսիւրներ պատկերով, կենսա-
գրութեամբ և ընտիր ոտանաւորներով:

ՄՕՍԿՎԱ, Հիմնված է կառավարման փո-
խարարական ընկերութիւն ֆոն Գոմարտու-
թիւնները կարճատեւական են լինելու:

ԴԻՆԶԴԵՆ, Ժամանակ գերմանական կայսրը
— Հրատարակված է թագաւորի մանիֆէստը,
որի մէջ ղէպի հարաւ ճանապարհ ընկնելուց
առաջ նա շնորհակալութիւն է ցայտնում ցա-
ւակցութեան համար, որ արտայայտվում է
այն ծանր դժբաղդութեան առիթով, որին են-
թարկվել է ինքը և իր ընտանիքը, և յոյս է
այտնում, որ ժողովրդի բոլոր դատակարարներին
ստիպող անհանգստութիւնը և յուզմունքը տեղի
կը տան հանգստութեանը և նախկին վստա-
հութեանը: Թագաւորը խնդրում է հաւատար-
մոր աջ անսաման վշտալի անցքի հիմքում
զրկված է վաղուց արդէն խորին կերպով ըն-
կած կնոջ անընկճելի կիրքը:

Խմբագիր՝ ԱԼԵԿՍԱՆԴՐ ՔԱՆԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԿՈՒԶԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱԼԱԿ ՄԷԼԻԲ-ԱՂԱՄԱԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԻԿԱՆՈՅ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Գուկիա, Վորոնոյի արձանի հանդէպ)

ԱՄԵՆՈՐ ԲԱԳԻ ԿԻՐԱԿԻՆՈՐԵՐԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԻԿԱՆՈՅ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. փրարուծութեան,
վերականգն (սիֆիլիս) և միգրացիա, հիւանդ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ—10 ժ. աչքի, ներքին և ներքինային.
Մ. Պ. ԱՆԿՆՈՍՏԵԱՆ—10—11 ժ. մարթու, վերական-
գնում և փրարուծութիւն:

Զ. Բ. ՔԱՆԱԹԱՐ—11—12 ժ. մանկաբարձու-
թեան կանանց և երեխայի.
Կ. Ի. ՊԱՆԻՍԿ—12—1 ժ. ախալձի, քթի և կո-
կորի.
Կ. Ն. ՔԱՆԱԹԱՐ—1—1/2 ժ. ներքին և երե-
խայի.
Ա. Պ. ՎԱՐՈՒՅԵԱՆ—1—1/2 ժ. ներքին և երե-
խայի.
Բ. Բ. ՔԱՆԱԹԱՐ

Ն. Ն. ՌԱՍՏԱՐՅԱՆ—5—6 ժ. փրարուծ. և մարթու.
Կ. (կեկարարութիւն).
Ն. Ս. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ. ներքին (կեկարար-
ութիւն) ներքին և վերականգնում.
Կ. Ի. ՊԱՆԻՍԿ—7—7 1/2 ժ. մանկաբարձու-
թեան և կանանց.
Կ. Ն. ՔԱՆԱԹԱՐ—7 1/2—8 ժ.
Պ. Պ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—7 1/2—8 ժ.

Վաւար 50 կ. չքաւարները ձրի համախորհրդի
(հոնթիլիս) և օպերացիայի համար առանձին.
Օ. Յ. ԱՎԱՆԻՍԿ—առանձին, ծաղկահաս և բժշկա-
կան մարմնամարզ, գիմն 11—1 ժ.:
Հիւանդանոցի վերականգնումը
բժշկական ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ՊՈՂ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՆ

Խնդրում է բոլոր իր նախկին խմբի անդամ-
ներին համախմբվել ամսոյս 7-ին, ուրբաթ
օրը, երեկոյան ժամը 6 1/2-ին մի և նոյն բնա-
կարանում (Вознесенская ул. № 8), ամսոյս
վերջին մի համարի աշուր նպատակով: Ընդունու-
վում են նոր անդամներ, մասնաւոր կանանց
ցից և օրիորդները: Խնդրում է լինեն ճշ-
տապահ:
2—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ԿՈՒՐՍՆԵՐ

Հարաւորութիւնը հրաւիրում է մրցման ան-
ճանց, որոնք կը ցանկանան ընդունել զարո-
ցական այրված կրպակների վերաշինութեան և
նրանց վրա երկրորդ յարկի կառուցման աշ-
խատութիւնները. այդ կարվածքը գտնվում է
քաղաքի 3 մ, Ռուսաց փողոցում: Պայման-
ների մասին կարելի է տեղեկանալ հոգաբար-
ձական ղեկանաւորը, ամենայն օր, բացի տո-
ներից, մինչև մարտի 12-ը ժամը 10—2:
2—4

Բերված են Լադոգեից Թիֆլիս և ծախվում
են ԱՄԵՆԱՍԿԱՆՔ, ընկերութեան տնկարանից

Պտղատու ծառեր

1—3 տարեկան, արտասահմանի և տեղական
տեսակներից՝ զիմու Աֆրիկանին ԴՊՈՒՍԿԱՅԱ
ул. магазинъ Мелик-Бахтманца.
3—10

ՄԻ ՀԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Ընտիր րէկամէնդացիաներով, փնտռում է պաշ-
տօն—գանձաւարի, (кассиръ), կառա-
ւարչի (управляющий), վերականգնողի
(надзиратель) և կամ հաշուապահի օգնականի:
Հասցէն հարցնել «Գուտտները» գրաւմա-
նանցում:
3—3

50,000

Ծառեր փայտեան անտառի, եղնի և չոճի, վեց
վերջով և աւելի, տրվում են կտրելու իշխա-
նուհի Մարիա Իօսիֆովնա Զավալովայի կա-
ռուածքում: Կայտածքը գտնվում է Անդրկով-
կանեան երկաթուղու Գրակալի կայարանից
տասն և հինգ վերստ հեռավորութեան վրա:
Բայի սրանից կայտածքում կան և ուրիշ տե-
սակի ծառեր—չինար, կաղնի, բոխի, աճառի և
կեփի: Տեղեկութիւններ առանալու համար խնդ-
րում են զիմու իշխանուհի Զավալովային—
Сол. Ховле, Горійскаго уѣзда, Тифлисска-
губ. և Карсъ, князю Джавахову. 1—20

ԲԱՆԱԿԻՑ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՊԱՏԱՌՈՎ

Ծախվում են

սեղանատան, հիւրասենեակի, առանձնասե-
նեակի և դահլիճի կարասիներ, աթոռներ, կոս-
ցերտի դաշնամուր Բէկկերի, ծաղիկներ, ձի և
կառքեր: Միջնորդ—առեւտրականներ չեն ըն-
դունվում: Կարելի է տեսնել ժամը 10—2-ը:
Վօրովզնայ փողոց, № 18, գաւթում, գենե-
րալ-էյտենանտ Կարպովի ընակարանում:
(հ. շ. ե.) 1—3

Հ Ր Ա Ի Է Ր

Մարտի 9-ին, կիրակի, ա. պատարագից յե-
տոյ, ժամը 12-ին, էջմիածնեցոց ա. Գէորգ ե-
կեղեցում լինելու է ծխականների ժողով երէց-
փոխի նոր ընտրութիւն կատարելու: Ուստի
խնդրում են նոյն եկեղեցու յարգելի ծխական-
ներին՝ յիշած օրը և ժամին չնոր՝ բերել եկե-
ղեցի ընտրութեանը մասնակցելու:
Թիֆլիսի հայոց եկեղեցիների բ. մասի գոր-
ծակալ՝
1—3 Դևոնդ քահանայ Մամիկոնեանց

ՎՐԱՑ ԱՂԱՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՍՐՈՆ

Ուրբաթ, մարտի 7-ին

ԴԵՐԱՆՆԵՐ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Իր կազմ խմբով կը ներկայացնէ

ԱՒԱԶԱԿՆԵՐ

Ողբերգութիւն 5 գործ. 7 պատկ. հեղ. Շիլլերի
Թարգմ. Փ. Վարդանանի

Ֆրանց Յոս-Մօրի դերը կը կատարէ պ. Յով-
հաննիսեան

Սկիզբն է 8 ժամին երեկոյան

Տեղերի գինը սովորական է: Տոմսակները կա-
րելի է ստանալ Թատրոնի կասսայում:
2—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մարտի 7-ին 1903 թ-ի նշանակված է Թիֆ-
լիսի Ժողովարանի անդամների ընդհանուր ժո-
ղով՝ մի քանի տնտեսական հարցեր քննելու և
քաղաքի տնտեսական և քննիչ յանձնաժողովի
անդամների թիկնածուներին, նոյնպէս և այն
անձանց, որոնք առաջարկված են անդամների
կանդիդատներ:

(1 և 6 մ.) 3—3

ԲԱԳՈՒ

«ДВОРЦОВЫЕ НОМЕРА» ՀԻՄՆԱՆՈՑԻ նոր
կապալաւուն հասցնում է ի տեղեկութիւն
ընդհանուրի, որ ներկայ 1903 թ-ականի յուն-
վարի 20-ից «Дворцовые Номера» հիւրանոցը,
որ գտնվում էր Բազու քաղաքում, Բաղրիբվա-
կի այցու մօտ, նոր անձի ձեռք անցնելուց յե-
տոյ, նա չեղ կերպով վերանորոգված է, պահ-
վում է օրինակելի կերպով և մարդու, մայրա-
քաղաքի լաւագոյն հիւրանոցների նման՝ ունի
անպայման քաղաքավարի և պատուէրները շու-
տափոյթ կատարող ծառայողներ, եկեղեցիների
յարմարութեան համար կան տեղեֆօն և կօմի-
սիօներ: Հիւրանոցը գտնվում է քաղաքի ա-
մենալաւ մասում, համարեա բոլոր կարեւոր
հիմնարկութիւններին մօտիկ: Հիւրանոցի մէջ
կան 30 նստիչներ, նստիչների գինը՝ սկսած 60
կօպէկից մինչև 5 ռուբլի օրական, իսկ ամսով
վարձելու համար պէտք է առանձին համաձայ-
նութիւն կայացնել հիւրանոցատիրոջ հետ:
Հիւրանոցում գտնվում է առաջնակարգ ըն-
տրան, մասնագէտ հիւրանոցատիրոջ անձնա-
կան հսկողութեան տակ:
Գները ամենալաւաւոր են:
4—4 Թարգմանք՝ Ա. ՄՈՒԹԱՅԱՆ

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Լ Է Օ

Գ Ր Ի Գ ՈՐ Ա Ր Ծ Ր ՈՒ Ն Ի

Առաջին հատոր

(477+VIII երես, 14 պատկերով)

Ամբողջ գործը, որ գրական-կենսագրական մի մանրամասն տեսութիւն է, բաղկացա-
կը լինի ԵՐԵՎԱՆԻ ԿԱՌԱՐԱՆԻ, Իւրաքանչիւր մօտ 500 երես, գաղափարված ԲԱՉՄԱԹԻԻ ՊԱՏԿԵՐՆԵՑԻ
ՐՈՎ (կը լինեն «Մշակի» աչքի ընկնող աշխատակիցների պատկերները):

Առաջին հատորը բաղկացած է երկու մասից. I) Արժեքներ, II) Գրքեր:
Արժեքները առանձնապէս տարեկան (գրական գործունէութիւն մինչև «Մշակը»): Երկրորդ
հատորը մասնաւոր տակ է:

Ե Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Վ Ո Ւ Մ Է Բ Ա Յ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ը

Բաժանորդագիրն է երեք հատորի համար ԵՐԵՎԱՆԻ ՐՈՒՄԼԻ, ճանապարհածախով 20 ՐՍ
ռուբլի Կարելի է վճարել և մաս-մաս, այն է 2 ռուբլի բաժանորդ գրվելու, իսկ մնացածը՝
երկրորդ հատորը լոյս տեսնելուց յետոյ:

Նրանք, որոնք կամենում են ունենալ գրքերը կազմերի մէջ, վճարում են ՄԻ ՐՈՒՄԼԻ
երեք կազմի համար: Դրաի քաղաքներից կազմած օրինակներին բաժանորդ գրվողները պէտք է
աւելացնեն ճանապարհածախս 20 կօպէկի պատշաճ փաթեթի համար:

Հատորները առանձին-առանձին չեն ծախվի: Բոլոր երեք հատորները լոյս տեսնելուց յե-
տոյ, գինը կը բարձրացնի: Վերադրված գումարով բաժանորդագրութիւն չէ ընդունվում:
Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է. 1) Հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը և
2) «Գուտտները» գրականատնոցում, Լօրիս-Մէլիքեան փողոց:

Օտար քաղաքայինները գիմում են. Тифлисе, Редакция «Мшакъ»:
ԲԱՅԻՌՈՒՄ բաժանորդ կարելի է գրվել պ. Գրքեր՝ Տէր-Յովհաննիսեանի մօտ, Ա. Մա-
տուրովի գրասենեակում:

!! Օ Գ Տ Վ Ե Ց Ե Ք Դ Ե Պ Ք Ի Ց !!

Ե Ղ Բ. Վ. ԵՒ Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ

ՀԱՆԴԵՐՁՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

որը գտնվում է Գորովիսկի պրոպէկտի վրա, I գիմնադրոյի հանդէպ:

Ն Շ Ա Ն Ա Կ Վ Ա Մ Է

ՄԻՄԻԱՅՆ ԵՐԿՈՒ ՀԱՐԱՌՈՎ

այն է փետրվարի 23-ից մինչև մարտի 5-ը

ՁԸ ՏԵՍՆՎԱՄ ԱՐԺԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Անցեալ տարվայ ամսապայման և ձեռնարկ սեղաններից մնացած տղամարդկանց, կանանց և
երեխայոց հաշուառների, որոնք առանձնապէս են միւսներից և վերջնական գները նշանակ-
ված է տրվելու իրա կապով մատուցում:

Ստացել ենք արտասահմանեան և ուսանկան ամենալաւագոյն գործարաններից, մեծ քանա-
կութեամբ զանազան տեսակ տրիկոներ և մանուշներ:

Ընդունում ենք ամեն տեսակ պատուէրներ, ծախում ենք նաև արշինով:
Ստացել ենք և չարունակ ստանում ենք եւրօպական ամենալաւագոյն տարազով կարված
տղամարդկանց և կանանց հագուստներ և վերնազգեստներ:

Գները արժանութեան կողմից չունի ոչ մի մրցող:

9—10

Ս. ՊԵՏԵՐՏՈՒՐԻԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն Ա Ք Ե Ժ Ք Ա

Ծովային, գետային և ցամաքային ապահովագրութեան, ապահովագրի տեղափոխութեան և
գումարը կրակից ապահովագրելու համար:

Հիմնված է 1847 թ-ին

Հիմնական գրամագուլիւր 1,650,000 ռուբլի
Պահեստի գրամագուլիւր 2,664,803

I. Ա Պ Ր Ա Ն Ք Ն Ե Ր Ի Տ Ե Ղ Ա Փ Ո Ւ Թ Ի Ն

Աւելի քան 300 գործակալութիւններ եւրօպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիա-
յի, Սիբիրի և հեռավոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս և ներկայացուցիչներ
արտասահմանի գլխաւոր քաղաքներում:

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների և իրերի, որոնց ընդունելութիւնը և յանձնումը
կատարվում է թէ՛ ամեն և թէ՛ պահեստներում ու խանութներում:

Յանձնում ենք բեռների ուղարկողների կողմից առաջարկված պայմաններով (վերադրի չճա-
նելի հաշիւ ուղարկողների, գրամի փոխադրութեան (переводъ) բեռները յանձնելու տեղը
հասցնելու համար և այլն):

Պահեստներ թանկեղէն արտադրութեան պայմաններով ստացման տեղերում՝ ապահովագրե-
ով նրանց պահեստներում, որի համար չափ կէտերում կան ընդարձակ պահեստներ, յաւելուկէս
բեռներ պահելու համար:

II. Ն Ա Ի Ա Գ Ն Ա Տ Ի Թ Ի Ն

Արեւելեան մարդատար, ապահովագրութեան և ձգող շտեմաւոր, Ծովային և գետային նաւեր
(70 նաւ):

Բեռնակիր և մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութեան Վօլգա գետի լայն
նաւահանգիստների մէջ, Րիբինսկից մինչև Աստրախան, և հետագայ Ծովի լայն
նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչև Պորտսմութի (Գալիպոլիս) ամեն տեսակ նաւերի, շտեմա-
ւորների և մարդատարների պահեստներ և փոխար:

Ամենալաւագոյն պահեստներ Նիժնիում (սիբիրական նաւամատուցի վրա), Աստրախա-
նում, Բազում և Կրասնովոդսկում:

Բեռները ամենալաւագոյն ուղարկելու համար ընկերութեան շտեմաւորները հա-
մաձայնութիւն է կապել երկաթուղիների հետ: Այն տարաների տեղափոխութեան համար
որոնք ուղարկվում են Ռուսաստանից Գալիպոլիսում և Գալիպոլիսից Ռուսաստան, գալու-
թիւն անի առանձին, բացառիկ արտոնութիւններ, համաձայնութեան Գալիպոլիսի տարածու-
ղարկան և տեղափոխութեան ընկերութեան հետ:

III. Ա Պ Ա Հ Ո Վ Ա Գ Ր Ա Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ՛ ցամաքային և թէ՛ ջրային ճանապարհ-
ներով (ծովային և գետային):
բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գրքերի:
գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ գրքերից ճանապարհին ամեն տեսակ նաւերի, շտեմա-
ւորների, ապահովագրութեան, վարձարների և վարձարների տեսակ:

դ) Ապահովագրութիւն թանկեղէն իրերի և արժեքաւոր թղթերի, որոնք ուղարկվում են պատուի, ցա-
մաքային և Ծովային ճանապարհներով, համալսարանի պատուի քաղաքային ղեկավարութեան լայն
պահեստներով, Գալիպոլիսի ընդունված են ինչպէս վարձարների, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան լայն
գործակալութիւնների մէջ:

Եւրոպական ճանապարհով արտադրող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մա-
նուշները գրաւվում են էլի արժ 350 գործակալութիւններ:
Ե. Պետերսբուրգի Եւրոպական ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերսբուրգում, Ապրիլայից
գրաւվում է միայն 10-րդ տարե-
կապից: Նախկին ընդունված շտեմաւորները համար՝ Բազում, գետային շտեմաւորները հա-
մար՝ Նիժնի-Նովոգորոդում:
Թիֆլիսի գործակալութիւնը—Դիմողները փողոցի վրա, վրաց ազնականների տանը: 34/35-ից № 108
(հ. ա. հ.) 45—120